ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Մ. Ի. ԱԲԵՂՅԱՆԻ ՃԱՌԸ

Ընկերներ.

Արդեն երբոր տարին է, որ հայ ժողովուրդը Հայրենական պատերազմի պայմաններում է նշում Հայաստանում Սովետական իշխանության հաստատվելու տոնը։

Այսօր մեր աչքերը լի են անհուն ուրախության զգացումով։ Ամենից առաջ նրանով, որ Հայրենական պատերազմի ընթացքը, ինչպես բոլորս տեսնում ենք, փոխել է հօգուտ Մեծ Սովետական Միության։ Վաղուց արդեն հաղթականորեն առաջ է շարժվում կարմիր բանակը, որի շարքերում Սովետական Միության ժողովուրդների զավակների հետ ուսուսի տված քաջաբար կռվում են նաև Հայաստանի զավակները։ Մեր քաջարի կարմիր բանակը մեծ առաջնորդ, Սովետական Միության Մարշալ Ստալինի ղեկավարությամբ վաղուց արդեն դեպի արևմուտք է քշում նենգաբարոյ ֆաշիստական հորդաներին՝ ազատագրելով մեր սովետական հողը։ Մենք խորապես համոզված ենք, որ շուտով կհասնի հաղթանակի վերջնական ու փառավոր օրը և խաղաղ շինարարությունը։

Ապա մեր ուրախության պատճառն է այսօր Սովետական իշխանության 23-րդ տարեդարձը տոնելը։

Սովետական իշխանությունը հայ ժողովրդին շատ բարիք է տվել։ Մի քառորդ դար առաջ ո՞վ կարող էր մտածել, որ գիտական խոշորագույն հաստատություն կհիմնադրվի մի երկրում, որը ավերված էր և որտեղ գտնվում էին գաղթականների տված բազմություններ։

Բայց կենսունակ հայ ժողովուրդը ոչ միայն կարողացավ, Սովետական Իշխանության շնորհիվ, տանել այդ ճախորդությունները, ազատվել բնաջնջումից, այլև որպես կուլտուրական բարձր արժեքների կրող դուրս գալ կուլտուրայի և էկոնոմիկայի հզոր զարգացման ուղին։

Ապա ակադեմիկոս Մ. Ի. Աբեղյանը հատուկտակի կանգ է առնում Հայաստանում գիտության ձեռք բերած նվաճումների վրա, այն ուղու վրա, որ անցել են ռեսպուբլիկայի գիտական հիմնարկները, որոնք եկել են ստեղծելու սկզբում գիտության և արվեստի ինստիտուտը, ավելի ուշ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալը, այսօր էլ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիան։

— Դա գիտական մի խոշորագույն հաղթանակ է,— ասում է ակադեմիկոս Մ. Ի. Աբեղյանը,— որ մեր սովետական երկիրը ձեռք է բերել սովետական իշխանության տարիների ընթացքում։ Մենք պատրաստել և ունենք մեծ թվով գիտական աշխատողներ զանազան բնագավառներում, որոնցից միայն մի փոքր մասն է արժանացել ակադեմիկոսների կոչման։ դրանցից բացի կան ոչ քիչ թվով դիտնականներ, երիտասարդ կադրեր, որոնք իրենց ուժերը ամբողջությամբ նվիրում են գիտության զարգացմանը։ Եվ նրանք վաղը կմտնեն մեր հայկական Ակադեմիան։

Անհրաժեշտ է,— ասում է նա,— որ հայկական Գիտությունների Ակադեմիայի շուրջը միավորված լինեն Հայաստանի ուժերից գուրս աշխատող հայ երիտասարդ կադրերը։ Սրանով ես չեմ ուզում ասել, թե հայ գիտնականները չպետք է աշխատեն մեր մեծ Սովետական Միության ուրիշ ռեսպուբլիկաներում։

Մենք պետք է ապրենք սերտ համագործակցությամբ Սովետական Միության եղբայրական ռեսպուբլիկաների հետ, եղբայրությամբ ռուս մեծ ժողովրդի հետ, պետք է մասնակցենք համամիութենական խնդիրների լուծմանը, որոնց իրականացմանը պետք է մասնակցենք մեր ուժերով, ինչպես ներկայումս մասնակցում ենք Հայրենական մեծ պատերազմին։

Մեր Գիտությունների Ակադեմիայի խնդիրն է է՛լ ավելի զարգացնել բովանդակությամբ սոցիալիստական, ձևով ազգային կուլտուրան։ Գիտությունների Ակադեմիան, զարգացնելով գիտության բոլոր ճյուղերը, դրանով իսկ իր լուման կմտցնի Սովետական Միության բոլոր ժողովուրդների գիտությունների գանձարանը։ Մեր Գիտությունների Ակադեմիան պետք է է՛լ ավելի մեծ չափով ազդի հայ ժողովրդի կուլտուրայի ու անտեսության զարգացմանը։

Հայկական Գիտությունների Ակադեմիան զարգացնելով բոլոր ճյուղերը՝ պետք է առանձնապես զբաղվի հայագիտության, հայոց պատմության, լեզվի, ֆոլկլորի զարգացման հարցերով և այլն, զբաղվի մեր երկրի անցյալի ուսումնասիրությամբ, հայտարարելով այն բոլոր կուլտուրական մեծ արժեքները, որ մեր պարծանքն են կազմում։

Ես զարձյալ ուզում եմ արտահայտել իմ և մեր ուրախությունը նրանով, որ Հայրենական պատերազմի այս դաժան օրերին մեր պարտիան և կառավարությունը ժամանակներ են համարել Երևանում Գիտությունների Ակադեմիա ստեղծելու։

Մենք խորին երախտագիտության զգացմունքով ենք լցված դեպի Լենինի–Ստալինի պարտիան, դեպի ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինը՝ գիտության հետագա զարգացման մասին հոգալու համար, մենք շնորհակալություն ենք հայտնում այն ջերմ շնորհավորանքի համար, որ այստեղ արին եղբայրական ռեսպուբլիկաների գիտական հասարակայնության ներկայացուցիչները։

Իսկ մենք՝ ոչ միայն ակադեմիկոսներս, այլև Սովետական Հայաստանի գիտական բոլոր աշխատողները, մեր գիտելիքներն ու ուժերը կնվիրենք գիտությունը զարգացնելու համար ի փառս մեր ժողովրդի, ի փառս Սովետական Միության։ Մեր բոլոր ջանքերը կգործադրենք, որպեսզի ամի ու ամրանա հայկական երիտասարդ գիտությունների Ակադեմիան և պատվավոր տեղ գրավի մյուս ակադեմիաների շարքում։

Եվ մենք անշուշտ ձեռք կբերենք գիտության այդ հաղթանակը, ինչպես մեր քաջարի կարմիր բանակը իր մեծ զորավար ընկեր Ստալինի ղեկավարությամբ փառավոր հաղթանակներ է տանում գերմանական տանելի զավթիչների դեմ։

Հավերժ փառք Հայրենիքի ազատագրման համար զոհված մեր հերոսներին։

Փառք և պատիվ ռազմաճակատում պայքարող անձնազոհ հերոսներին։

Փառք մեր մեծ զորավար Ստալինին, որը ղեկավարում և ոգեշնչում է մեր մարտիկներին։

Ողջո՛ւյն Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիային։

Կեցցե՛ Սովետական Հայաստանը, որ Սովետական մեծ Միության անբաժանելի մասն է կազմում (բուռն ծափահարություններ)։